ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՒՀԱՄԱԴ ՌԵԶԱ ՍԱԴԵՀ ՄԵՅՍԱՆԴԻ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ ԻՐԱՆՈՒՄ

Ը. 00.01. - «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարզպանյան Հարություն Ալեքսանի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թադևոսյան Զոյա Աղվանի

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գաբրիելյան Արման Գառնիկի

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. մայիսի 30-ին, ժամը 15^{00} - ին Երևանի պետական համալսարանում գործող տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0009, Երևան, Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2014թ. ապրիլի 29-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, տեխն. գիտ. դոկտ., պրոֆ. Առաքելյան Ա.Հ.

Հետազոտության թեմայի արդիականությունը: Կրթությունը կարևոր դերակատարում ունի տնտեսական զարգացման գործում: Տնտեսական աճի շատ տեսություններ, որոնք էմպիրիկորեն վերլուծել են հիմնահարցը, աներկբայորեն և հետաքրքիր ձևով վկայում են, որ գոյություն ունի սերտ կապ տնտեսական աճի արդյունքների և կրթության միջև: Օրինակ, Սոլոուն (1985) ապացուցել է, որ ազգային եկամտի փոփոխությունները պայմանավորված են ազգաբնակչության մտավոր և ֆիզիկական կարողությունների փոփոխություններով: Բեքերն (1966) իր մարդկային կապիտալի տեսության մեջ հավաստում է, որ կրթահամակարգը աշխատողներին ուսուցանում է արժեքավոր ունակություններ, արդյունքում հասցնելով նրանց տնտեսապես շահավետ դիրքերի: Բլայնի (1991) կարծիքով ֆիզիկական և նյութական կապիտալը չի կարող արդյունավետորեն օգտագործվել, եթե հասարակության մեջ տեխնիկական գիտելիքները, հմտությունները, ոչ նյութական լծակները առկա չեն: Հարբիսոնի (1973), Կուզնեցի (1966), Բեքերի (1975), Կոնդրիքի (1980) և այլոց ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրթության մեջ ներդրումների հարաբերականորեն արագ մեծացումը երկրի տնտեսական աճի երաշխավորման առավել կարևոր գործոններից է: Այս ուսումնասիրությունները պարզորոշում են, որ կրթության մեջ ներդրումների յուրաքանչյուր դոլարը նույնիսկ ազգային եկամուտն ավելելացնում է ավելի մեծ չափով, քան ճանապարհների, ամբարտակների, գործարանների և այլ կապիտալային բարիքների մեջ ներդրումները:

Նորդասական տնտեսագետ Թիոնենը (1982) համոզված է, որ անհատների ունակություններն ու որակավորումը տնտեսական արժեք ունեն այնքանով, որքանով արդյունավետ են արտադրական գործընթացում: Նա նշում է, որ ավելի շատ կրթված մարդկանցով երկիրը կարող է արտադրել ավելին, քան միայն կապիտալային ապրանքները և հումքը: Ավելին, նա կարող է բարիքները շուկա հասցնել ավելի արագ, քան պակաս կրթված բնակչությամբ երկիրը: Այդ պատճառով, հասարակությունը պետք է գնահատի իր կրթված անդամներին, փորձագետներին և մտավորականներին

Ֆրեդրիկ Հարբիսոնը (1973) այն հետազոտողներից է, ով համոզված է, որ մարդկային ռեսուրսները երկրի հարստության հենասյունն են: Նա պնդում է, որ եթե երկիրը չի կարողանում բարելավել իր ժողովրդի հմտություններն ու գիտելիքները, չի էլ կարողանա արդյունավետորեն զարգացնել ազգային տնտեսությունը: Դրան հակառակ, եթե երկիրը կարողանա հասնել ավելի արտադրողական աշխատանքի, կարող է իրականացնել ցանկացած տեսակի բարելավում:

Անհատները պետք է ձեռք բերեն պահանջվող գիտելիքները և հմտությունները իրենց կարիերայի համար: Գիտելիքներն անհատին բավարարվածություն են ապահովում իր աշխատանքից, նրան ապահովագրում են հուսալքվածությունից, քանի որ արդյունավետությունն ու արդյունարարությունը դառնում են նյութական և շոշափելի՝ հանգեցնելով արտադրանքի ամբողջականության ու կատարելության: Համապատասխանաբար, հասարակությունը կապահովի ապրանքների ու ծառայությունների բարձր որակն ու չափորոշիչը, որը նրան կապահովի կապիտալի և աշխատանքի պարապուրդից:

Մյուս կողմից, կրթության համար որոշ ծախքեր պետք է կատարվեն, ընդգրկված լինելով կառավարության ծախսումների մեջ: Արժեքավոր արտադրանքի արտադրության ծախքերը կմեծացնեն նաև երկրի միջազգային համբավը: Բացի պետական ծախսումներից, մասնավոր հատվածն էլ է ակտիվություն ցուցաբերում այս ոլորտում,

ծախսելով շոշափելի գումար այդպիսի կարևոր արտադրանքի արտադրության համար: Մեր օրերում, պետական ծախսումների կազմում կրթական գործունեությանը հատկացված ընդհանուր գումարները շատ երկրներում կազմում են համախառն արդյունքի շոշափելի մասը: Ակնհայտորեն, հասարակության զարգացումն ապագայում կունենա լուրջ մարտահրավերներ, եթե կրթահամակարգի բյուջեն պատշաճ ուշադրության չարժանանա, և եթե այս բնագավառը համարվի ոչ արտադրողական և սպառողական: Ապագայում միտումը գիտելիքահենք զարգացումն է, որը հասարակության մեջ կձևավորի ժամանակակից տնտեսության նոր մոդել:

Մինչև 1960-ականները, առավել շատ արտադրելը հիմնավորող մոտեցումների համաձայն, գերակշռող էր նյութական արտադրության վրա հիմնված տնտեսությունը, և արտադը-ության ճյուղերում գլխավոր դերակատարում ունեին աշխատուժը և կապիտալը: 1960-ականներից ի վեր համաշխարհային տնտեսությունը կրում է լուրջ և սրընթաց փոփոխություններ, ենթարկվելով վայրիվերումների: Սա գլխավորապես պայմանավորված է համակարգչային, համացանցային արագ տեխնոլոգիական բարելավումներով և գիտության ու արտադրության մեջ կատարվող առաջընթացով:

Համապատասխանաբար, աշխարհում տիրապետող կդառնա նոր տնտեսակարգը և ավանդական տնտեսական վարքագիծը փոփոխության կենթարկվի: Կարելի է ասել, որ այս մոտեցումը, որ շարունակական է սկսած 2010-ից, հազիվ թե փոփոխության ենթարկվի, քանի դեռ չի փոխարինվել գիտելիքահենք տնտեսությունը: Այլ կերպ ասած, միայն այն հասարակությունները, որոնք կկարողանան բարելավել վիճակը գիտության և նորարարության ոլորտներում, կունենան ամուր տնտեսություն (Սալարի, 2009): Հետևաբար, գնահատելով գիտելիքահենք տնտեսության ձևավորման և կայացման գործում գիտության և կրթության կարևորությունը, կարելի է եզրակացնել, որ տնտեսական զարգացման և կրթության հայեցակարգերը փոխներհյուսված են:

Կրթության մասնակցությունը հասարակության տնտեսական զարգացմանը և դրա տնտեսագիտական մեկնաբանությանը բխում են հենց տնտեսության սահմանումից. «Տնտեսությունը գոյություն ունեցող ռեսուրսների օգտագործումն է ապրանքների ու ծառայությունների արտադրության նպատակով, ինչպես նաև վերջիններիս բաշխումը ժողովրդի բարեկեցությունն ու բավարարվածությունն ապահովելու համար»:

Կրթությունն ակնառու դերակատարում ունի տնտեսական գործունեության բոլոր երեք փուլերում. 1) բնական և մարդկային ռեսուրսների գնահատումը և շահագործումը, 2) արտադրությունը և 3) ապրանքների ու ծառայությունների բաշխումը շեշտադրելով մասնավորապես՝ արժեքի աճը, կրթված մարդկային ռեսուրսների՝ որպես արտադրության գործընթացի էական գործոնի կարևորությունը, ինչպես նաև՝ ազգային տնտեսության զարգացման գործում կրթության դերն ու դրվածքը (Ասրարի, 1977): Հասարակության գլխավոր հարստությունը ժողովուրդն է, իսկ երկրի արտադրական ներուժը կախված է մարդկային ռեսուրսների որակավորումից: Ժամանակակից գիտելիքի դարաշրջանում հասարակության հասույթի զգալի մասը ներդրվում է երիտասարդների կրթության գործում: Մյուս կողմից, տնտեսական աճի ու զարգացման համար անհրաժեշտ է բանիմաց ու որակյալ աշխատուժ: Հետևաբար, հասարակությունը շահագրգռված է ներդրումներ կատարել աշխատողների որակավորման ու հմտությունների մակարդակը բարձրացնելու գործում:

Անցյալում տնտեսագետներն իրենց ուսումնասիրությունները սևեռում էին այն հարցին, թե արդյունքն ինչպե՞ս պետք է բաշխվի աշխատանքի, կապիտալի, հողի և բնական ռեսուրսների միջև, նրանց մտահայեցողության համաձայն անհատներն օժտված են միանման աշխատանքով և կարող են փոխարինել մեկը մյուսին, քանի որ

նրանց միջև նկատելի տարբերություններ չկան: Տնտեսագիտական վերլուծություններում հաշվի չէր առնվում այն փաստը, որ անհատներն օժտված են տարբեր հմտություններով (Էմադզադե, 2006):

Ներկայումս տնտեսական աճի և զարգացման բնագավառում մտածողների մեծ մասն ընդգծում է կրթված և որակավորված աշխատանքի կարևորությունն ու վճռորոշ դերը երկրների տնտեսական զարգացման գործում, ընդունելով, իհարկե, բնական ռեսուրսների և կապիտալի կարևոր դերակատարումը տնտեսական նպատակների իրացման հարցում: Նրանք հավատացնում են, որ երկրի բարգավաճման էական գործոնը մարդկային ռեսուրսներն են և դրանց որակը (Բալազադե, 2006): Նկատելի է հետևյալ մոտեցումը. կրթության և տնտեսական աճի միջև կապը միակողմանի չէ: Իրականում տնտեսական զարգացումը հաճախ լուրջ ազդեցություն է ունենում կրթահամակարգի, դրա քանակական և որակական պարամետրերի վրա:

Այսպիսով չնայած կրթությունն ազդում է տնտեսական զարգացման վրա, վերջինս, իր հերթին, կարևոր ազդեցություն ունի կրթության վրա: Այլ կերպ ասած, ՀՆԱ-ի ավելացումը հանգեցնում է գրագիտության, կրթվածության և մարդկային զարգացման այլ համաթվերի ավելի բարձր մակարդակի (Դեգհան, 2006): Մարդկային գործոնի մեջ ներդրումները նույնական են այլ ոլորտներում ներդրումներին: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, փոխանակ աշխատանքի անցնելու և փող վաստակելու, ըմդունվելով համալսարան և ներդրում կատարելով մեզ վրա, մենք ապագայում ակնկալում ենք ձեռք բերել հետաքրքիր աշխատանք կամ ավելի մեծ եկամուտ (կամ՝ երկուսն էլ)՝ որպես պարգևատրում: Միշտ էլ որևէ մեկի կյանքի ընթացքում նրա եկամտի հավելաճն ավելին է, քան միայն ծախքերի փախհատուցման համար պահանջվող գումարը (Թագավի, 1994): Մարդկային կապիտալում ներդրումների կատարումը մի գործընթաց է, որը հանգեցնում է ավելի շատ արտադրության և երկարաժամկետ տնտեսական աճի:

Հաշվի առնելով վերոնշյալ հիմնախնդիրները և հետազոտության առանցքում ունենալով կրթության դերը մարդկային ռեսուրսների պատրաստման հարցում, ինչպես նաև մարդկային ռեսուրսների դերը տնտեսական զարգացման մեջ, ատենախոսությունում փորձ արվում ցույց տալ կրթության և մարդկային զարգացման միջև փոխադարձ կապը Իրանում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակը Իրանի Իսլամական Հանրապետությունում կրթության և տնտեսական զարգացման փոխադարձ կապի բացահայտումն է: Այդ նպատակին համապատասխան, առաջադրված են կատարված հետազոտության հիմնական խնդիրները: Դրանք են՝

- Իրանի Իսլամական Հարապետությունում կրթության զարգացման միտումների բացահայտումը,
- Երկրի տնտեսական աճի վրա կրթության զարգացման ազդեցության հիմնավորումը,
- կրթության և տնտեսության զարգացման ցուցանիշների ստոդաստիկ կապերի բացահայտումը,
- տնտեսական աճի տեսանկյունից կթության զարգացման քաղաքականության առաջնահերթությունների մշակումը,

- կրթության զարգացման ճանապարհով գիտելիքահենք տնտեսության ձևավորման և այս ոլորտում երկրի մրցակցային դիրքերի բարելավման ռեզերվների բացահայտումը:
-

Հետազոտության օբյեկտն է Իրանի Իսլամական Հանրապետության կրթության և տնտեսության փոխկապակցվածության համակարգն է, իսկ առարկան՝ դրանց կապի սերտության վերլուծությունը, որով հնարավորություն է ընձեռվել.
- համապարփակ վերլուծելու կրթության և տնտեսության զարգացման ցուցանիշները,
- փոխկապակցելու կրթության զարգացման և երկրի տնտեսության աճի ցուցանիշները,
- բացահայտելու կրթության զարգացման և տնտեսական աճի կապի սերտությունը քանակական չափումներով:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքը և տեղեկատվության ապահովումը:

Ատենախոսության համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել տնտեսագիտական դասական աշխատություններում տեղ գտած դրույթներն ու հետևությունները: Աշխատանքում օգտագործվել են նաև տնտեսական հարաբերությունների կարգավորման նորմատիվային ու մեթոդաբանական հրահանգներ:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են գիտական աբստրակցիայի տարրեր, վիճակագրության, տնտեսական գործունեության վերլուծության հնարքներ, ինչպես նաև երևույթների քանակական չափումների եղանակներ:

Հետազոտության համար անհրաժեշտ գիտական տեղեկատվությունը քաղված է մեծամասամբ արտասահմանյան մասնագիտական գրականությունից, Իրանցի տնտեսագետների աշխատություններից, իսկ վիճակագրական տեղեկատվությունը՝ Իրանի Իսլամական Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, Ֆինանսների և էկոնոմիկայի, Տնտեսական զարգացման նախարարությունների պաշտոնական տեղեկագրերից:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթն է հանդիսացել Իրանի Իսլամական Հանրապետությունում տնտեսության և կրթության զարգացման փոխկապվածության առանձնահատկությունների շրջանակի բացահայտումը: Մասնավորապես.

- Իրանի իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համեմատական վերլուծության շրջանակում հիմնավորվել է զարգացող երկրներում պետական և մասնավոր միջոցներով կրթության «համակցված ֆինանսավորման» սկզբունքի արդյունավետությունը, որով ներդաշնակ նախապայմաններ են ստեղծվում կրթության միջոցով տնտեսական աճի խթանման դերի բարձացման ուղղությամբ,
- տնտեսության զարգացման ակտիվացման առումով կրթական ծառայությունների կառուցվածքային տեղաշարժերի և տնտեսական աճի փոխկապացվածության վերլուծության հիման վրա ներկայացվել են կրթության առաջնահերթությունները Իրանում, նախապատվությունը տալով գրագիտության և միջին մասնագիտական կրթության զանգվածային ընդլայնմանը,
- մարդկային զարգացման համաթվի կառուցվածքային քանակական գնահատումներով հիմնավորվել են համաշխարհային վարկանիշային սանդղակում

երկրի դիրքի բարելավման ուղիները ոչ թե տնտեսական, մասնավորապես՝ նավթային գործոններով, այլ գիտելիքահենք տնտեսության զարգացման և Իրանի ազգաբնակչության կրթական ցենզի բարձրացման ճանապարով,

- ռեգրեսիոն վերլուծության միջոցով հաշվարկվել է երկրի տնտեսական աճի և ազգաբնակչության կրթական մի շարք ցուցանիշների միջև կապի սերտության ցուցանիշների համախումբ, որով հիմնավորվել է հանրակրթության և Իրանի տնտեսության զարգացման միջև փոխազդեցության բարձր աստիճանը:

Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքների կիրառումը Իրանի Իսլամական Հնարապետությունում արմատապես կբարելավի.

- կրթության ֆինանսավարման կառուցվածքային տեղաշարժերի գործընթացը,
- կրթական բարեփոխումների առաջնահերթությունների ներկայացումը,
- կրթության զարգացման և տնտեսական աճի փոխազդեցության ազդեցության գնահատման իրատեսության աստիճանի բարձրացումը:

Ատենախոսության արդյունքների հավանության արժանացումն ու փորձարկումը: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել և հավանության են արժանացել ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսություն» ամբիոնում: Կրթության և տնտեսական աճի մակրոտնտեսական փոխկապակցվածության ցուցանիշների համակարգը փորձարկվել է Իրանում:

Աշխատանքի ծավալն ու կառուցվածքը: Ատենախոսությունը շարադրված է 131 համակարգչային էջի վրա և բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից ու առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից:

Հետազոտության արդյունքների հրատարակումները: Ատենախոսության գիտական դրույթներն ընդգրկված են հեղինակի կողմից հրատարակված 4 հոդվածներում: Ատենախոսության թեմայով հրատարակումների ընդհանուր ծավալը կազմում է 4,2 հրատ. մամուլ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում ներկայացվել են ատենախոսության թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակը, խնդիրները, օբյեկտը, առարկան, տեղեկատվության աղբյուրները, արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ ***«Կրթության և տնտեսական աճի փոխկապակցվածության տեսության ակնարկ»*** գլխում քննարկվել են գիտելիքահեք տնտեսության ձևավորման և տնտեսական աճի վրա ազգաբնակչության կրթական ցենզի ազդեցության տեսական հիմնախնդիրները:

Մինչև 1960-ականները կրթության տնտեսագիտությունը լուրջ ուշադրության չէր արժանանում: Այս բնագավառը վերլուծում է կրթական ծախսումների արդյունքների չափման զանազան մեթոդներ, ծախսումներ, որոնք ընդունվում են որպես ներդրումային ծախքեր: Չնայած Ադամ Սմիթից ի վեր բազմաթիվ բանավեճեր են տեղի ունեցել կրթական ծախսումների կապիտալային և սպառողական բնույթի միջև առկա տարբերությունների վերաբերյալ, միայն 1960-ականներին՝ Չիկագոյի համալսարանից Թեոդոր Շուլցի գլխավորած գիտական ուղղությունն այս բանավեճը ներկայացրեց որպես տնտեսագիտական հետազոտությունների առավել հակասական ոլորտներից մեկը: 1962-ից հետո Շուլցի մարդկային կապիտալի տեսությանը հետևեց կրթության տնտեսագիտությունը, որը սևեռվում էր կրթության վրա, որպեսզի դրա միջոցով գնահատվի տնտեսության կապիտալը, արդյունքներն ու ռեսուրսները:

Մարդկային կապիտալը միայն տնտեսագիտական հայեցակետ է: Փաստորեն, մարդկային կեցության որակական բնութագրերն ինչ-որ տեսակի կապիտալ են, քանի որ այս որակները, ձևավորվելով կրթության շնորհիվ, կարող են բարելավել անձանց ունակությունները և ապագայում ավելացնել նրանց եկամուտը կամ ապահովել ավելի մեծ բավարարվածություն: Տնտեսագիտական ուսմունքների պատմության մեջ մարդկային կապիտալը սկզբնական շրջանում մնացել էր չճանաչված, քանի որ նրա համար որևէ «տեղ» չկար եռմիասնական արտադրության գործոնների շարքում: Ըստ այս գործոնների, հողն ապահովված էր բնության կողմից, աշխատանքն առաջարկվում էր բանվորների կողմից, իսկ կապիտալը սահմանափակվում էր այն ֆիզիկական և նյութական տարբեր տիպի բարիքներով, որոնք վերարտադրելի են: Արտադրության գործոնների այսպիսի ընկալումը և կապիտալի սահմանափակումը ֆիզիկական բարիքներով, ինչպես նաև մարդկային կապիտալի անտեսումը, հանգեցրեց պատշաճ տնտեսագիտական վերլուծությունների իրականացման համար անհրաժեշտ առանցքային գործիքների դուրսմղմանը: Մի կողմից՝ աշխատանքի որակի մեջ ներդրումները հանգեցնում են աշխատողների տաղանդի և նորարարության ծաղկմանը և նրանց արտադրողականության աճին, մյուս կողմից՝ մարդկային կապիտալի կայացմանը և դրա բարելավմանը: Ուստի մարդկային կապիտալը ճանաչվեց որպես հասարակությունների առաջընթաց զարգացման կարևոր գործոն: Մարդկային կապիտալի առանցքը անհատների որակներն են, նրանց ունակությունների որակը, ինչը որպես կանոն բխում է նրանց կրթության մեջ ներդրումների կատարումից: Մարդկային կապիտալի ձևավորումը համալրում է ֆիզիկական կապիտալը և, որպես ֆիզիկական կապիտալի հենք, հանգեցնում ավելի բարձր արտադրողականության: Մարդկային կապիտալի ավելի մեծ չափով օգտագործումը մեծացնում է ֆիզիկական կապիտալի արդյունավետությունը (Էմադզադե, 2006): Շուլցի մարդկային կապիտալի տեսությունը սահմանում է, որ աշխատանքի մեջ ներդրումը սպառողական ծախսում չէ,

ավելի շուտ այն երկարաժամկետ ներդրում է: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում ապագայի նկատմամբ ավելի լայնախոհ մոտեցում ցուցաբերել, երբ ուսումնասիրվում են կրթության առավելություններն ու արդյունքները: Տնտեսական աճի գործում կրթության դերի վերաբերյալ ուսումնասիրությունների մեծ մասը, բացառությամբ գյուղատնտեսության արտադրողականությանը նվիրված ուսումնասիրությունների, կատարվել է լոկ մակրոտնտեսագիտության դիտակետից: Նմանապես կրթության մեջ ներդրումների հատույցի նորմայի շուրջ գնահատումների մեծ մասը ներկայացվել են որպես կրթության և տնտեսական աճի միջև կապի վկայություն: Որոշ ուսումնասիրողներ հիմնավորապես կարծում են, թե կրթության և եկամտի միջև կապ կարելի է հաստատել, քանի որ նրանց քննարկման առարկան տնտեսական աճի վերլուծությունն է: Նկատի առնելով, իհարկե, որ հատույցի նորմայի շուրջ վերլուծությունները հենվում են ներդրումների հարցում որոշումների կայացման անհատական վերլուծությունների վրա, այդուհանդերձ ատենախոսությունում կդիտարկվում են այն մոտեցումները, որոնք առնչվում են մակրո ասպեկտին:

Աշխարհի շատ երկրներում, մասնավորապես զարգացող երկրներում, կրթության բյուջեն մեծ կարևորության առարկա է: Կրթության մեջ ներդրումների իրականացումն էական հարց է, քանի որ այն տնտեսության համար ապահովում է աճ և զարգացում, կենսամակարդակի և հասարակության բարեկեցության բարձրացում, ինչպես նաև զբաղվածության հավասար հնարավորություններ, սոցիալական արդարության բարձր մակարդակ: Երբ այսօրինակ ծառայության արտակարգ առավելությունները գիտակցվեցին հասարակության կողմից, քսաներորդ դարում կրթության նկատմամբ պահանջարկն աճեց, հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այսպիսի աճած պահանջարկը, զուգակցված կրթական տարբեր մակարդակներում ծախքերի արագ աճի հետ, անհրաժեշտություն են դարձնում, որ բոլոր երկրները կայացնեն համապատասխան որոշումներ և պլանավորեն մանրակրկիտ ծրագրեր այսպիսի թանկարժեք ծառայության արդյունքների գծով:

Երկրները նաև պետք է մեծ ջանքեր գործադրեն իրենց ռեսուրսները շահագործել այնպես, որպեսզի հասնեն այս նպատակին գիտական և խելամիտ մեթոդներով: Տարրական կրթությունը, իսկ որոշ երկրներում նաև միջնակարգ կրթությունը նյութականացնելու նկատառումով, նախնական կրթությունն ընդունվում է որպես մարդու իրավունքների բաղկացուցիչ մաս: Այդ պատճառով միջազգային կազմակերպությունները զարգացող երկրներին խորհուրդ են տալիս, որ նախնական կրթությունը լինի պարտադիր և անվճար: Մի շարք զարգացող երկրներում միջնակարգ կրթության վկայական ունենալն անհրաժեշտ պայման է աշխատաշուկա մուտք գործելու համար: Ընդունելով գրագիտության և կրթության կարևորությունը, աշխարհի շատ երկրներ կիզակետվել են անվճար կրթության և կրթական ծառայությունների վրա՝ տարրական և միջնակարգ մակարդակներում: Իրանի սահմանադրության համաձայն կրթությունն անվճար է, հետևաբար պատշաճ կրթական բյուջեն կարող է հանգեցնել երկրի զարգացմանն ու տնտեսական աճին տարբեր առումներով: Ակնհայտորեն, զարգացած երկրների բյուջեն ցույց է տալիս, որ տնտեսական աճը և համախառն ներքին և ազգային արդյունքի ավելացումն այս երկրներում հանգեցրել է կրթական և գիտահետազոտական բյուջեների մեծացմանը: Ուստի, սույն հետազոտության մեջ փորձ է արվում ցույց տալ կրթության մեջ ներդրումների կարևորությունը և կրթության դերը Իրանի Իսլամական Հանրապետությունում տնտեսական զարգացման գործում:

Կրթությունը բարելավում է ավելի մեծ արտադրողականության ներուժը, ճիշտ այդպես էլ՝ ավելի շատ վաստակելու ներուժը: Սույն հետազոտության մեջ դիտարկվում են հետևյալ փոփոխականները.

- Իրանի համախառն ներքին արդյունքը
- Իրանի կրթության համաթվի տոկոսը՝ ՄԱԿ-ի մարդկային զարգացման համաթվերի համադրմամբ
- Իրանում կյանքի տևողության համաթիվը՝ ՄԱԿ-ի մարդկային զարգացման համաթվերի համադրմամբ
- Կրթության մեջ ավելացված արժեքը Իրանի ՀՆԱ-ում
- ՄԱԿ-ի մարդկային զարգացման համաթիվն Իրանի համար
- Կառավարության համախառն ծախսումները կրթահամակարգում
- Կառավարության տարեկան համախառն ծախսումները
- Մասնավոր դպրոցների թիվը և դրանց հարաբերակցությունը պետական դպրոցների հետ
- Պրոֆեսիոնալ և տեխնիկական դպրոցների թիվը և դրանց հարաբերակցությունը տեսական դպրոցների հետ
- Իրանի դպրոցներում իգական և արական սեռի սովորողների հարաբերակցությունը
- Իրանի կրթահամակարգում մագիստրոսական աստիճանի և ավելի ցածր աստիճանի կրթություն ստացողների հարաբերակցությունը
- Իրանի կրթահամակարգի ինստիտուտներում դիպլոմավորված և բարձրագույն կրթությամբ անձնակազմի թիվը:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Կրթական ծախսերի և տնտեսական աճի գնահատման հիմնախնդիրները»*** գլխում բացահատվել են զարգացող երկրներում տնտեսական աճի վրա ազգաբնակչության կրթության ներազդեցության ուղղությունները:

Ֆիլիպ Ստիվենսը և Մարտին Ուիլը (2003) հետազոտություն են իրականացրել կրթության և տնտեսական աճի միջև գոյություն ունեցող կապի կապի վերաբերյալ: Այն ցույց է տալիս, որ 20-րդ դարի սկզբների վիճակագրական տվյալները համահունչ են այն եզրակացություններին, որոնք կատարվել են շատ ավելի ուշ շրջանում: Վերլուծում է կրթության դերը առաջադիմական տեխնոլոգիաների օգտագործումը խթանելու գործում: Հեղինակները եզրակացնում են, որ դժվար է լիովին բավարարված լինել բազմաբնույթ և բազմաթիվ ուսումնասիրություններից, որոնք դիտարկում են կրթության ազդեցությունը տնտեսական աճի վրա: Միկրոտնտեսագիտական վերլուծությունները գնահատում են կրթության ազդեցությունը անհատական եկամտի վրա, և հետազոտողներն առավելապես համամիտ են այն մակրոտնտեսագիտական հետազոտությունների հետ, որոնցում հատույցի նորման գնահատվում է նույն չափով, ինչ-որ միկրոտնտեսագիտական հետազոտություններում՝ 6-12 %: Քանի որ հետազոտությունների արդյունքներով գրանցվող ավելի բարձր կամ ավելի ցածր հատույցները նվազ հավանական են, ուստի հրատարակված տվյալների շեղումը հավանաբար բացատրելի է ընտրանքով: Այսպիսով, տարբեր հետազոտություններից ստացված եզրակացությունները մեծամասամբ հավաստում են, որ գոյություն չունեն արտառոց դեպքեր, որոնք ցույց կտային, թե կրթության հատույցը շատ է տարբեր վերոնշյալից: Այդուհանդերձ, կան որոշ ապացույցներ հօգուտ այն տեսակետի (ինչը տեղի ունի որոշ երկրների դեպքում), որ կրթության հետ մեկտեղ երբ ավելի մեծ չափով կիրառվում են

առկա հասանելի տեխնոլոգիաները, կրթության հատույցը զարգացման մակարդակի զուգահեռ գնալով նվազում է (մինցերյան հատույց):

Բաբաթունդը և Իֆաբին (2005) հետազոտել են կրթության և տնտեսական աճի միջև երկարաժամկետ փոխառնչությունը Նիգերիայում 1970-2003 թթ.՝ կիրառելով Յոհանսենի համաինտեգրման մեթոդիկան և սխալների ճշգրտման վեկտորի մեթոդաբանությունը: Նրանք վերլուծել են երկու տարբեր ուղիներ, որոնց միջոցով մարդկային կապիտալը Նիգերիայում կարող է ազդել երկարաժամկետ տնտեսական աճի վրա: Առաջին ուղին այն է, երբ մարդկային կապիտալն ուղղակի ներդրում է արտադրական ֆունկցիայի մեջ, իսկ երկրորդ ուղին՝ երբ մարդկային կապիտալն ազդում է տեխնոլոգիական պարամետրերի վրա: Յոհանսենի համաինտեգրման արդյունքը սահմանում է երկարաժամկետ փոխառնչություն կրթության և տնտեսական աճի միջև: Լավ կրթված աշխատուժը էական ազդեցություն է ունենում տնտեսական աճի վրա թե՛ որպես արտադրական ֆունկցիայի գործոն, թե՛ որպես արտադրողականության համընդհանուր գործոն:

Փահլիվանին (2005) ուսումնասիրել է Իրանի ՀՆԱ-ի աճի գլխավոր որոշիչները, օգտագործելով 1960-2003 թթ. տարեկան վիճակագրական տվյալների շարքերը: Դիտարկվող ժամանակահատվածում Իրանի տնտեսությունը կրել է բազմաբնույթ կառուցվածքային փոփոխություններ և ռեժիմի տեղաշարժեր: Այսպես, տվյալների ժամանակային շարքերի հատկություններն առաջին անգամ վերլուծվել են Ժիվոտ-Էնդրյուի (1992) մոդելում: Այս մոդելի վրա հիմնված էմպիրիկ տվյալները ցուցում են, որ հետազոտության մեջ ընդգրկված բոլոր փոփոխականների համար ենթադրյալ միասնական ծածկի վարկածը ժխտելու համար բավարար ապացույցներ չկան: Հաշվի առնելով էնդոգեն պայմանավորվածություն կառուցվածքային շարքերի արդյունքները, Սայկոնենի և Լյութկեֆոլի (2000) համաինտեգրման մոտեցումն այնուհետև օգտագործվեց տնտեսական աճի երկարաժամկետ կրիչները հստակեցնելու նպատակով: Այս համաինտեգրման տեխնիկան հարմարվեց այն հնարավոր կառուցվածքային տեղաշարժերի նկատմամբ, որոնք կասկածի տակ էին դնում ՀՆԱ-ի աճի և դրա գլխավոր որոշիչների միջև գոյություն ունեցող երկարաժամկետ կապի գոյությունը: Էմպիրիկ գնահատումները փաստեցին, որ երկարաժամկետ կտրվածքով տնտեսական աճի ցուցանիշների բարելավման հասնում է այն քաղաքականությունը, որը նպատակաուղղված է կատարելու ամենատարբեր ներդրումներ՝ մարդկային կապիտալի, առևտրի ազատականացման և տեխնոլոգիական նորարարությունների ոլորտներում:

Չինաստանում բարձագույն կրթության գնահատման սանդղակի և տնտեսական աճի միջև երկարաժամկետ և կարճաժամկետ փոխազդեցության մեխանիզմի հիմնախնդիրներն ուսումնասիրելու նպատակով Հյուանգը, Ձինը և Սանը (2009) առաջ մղեցին համաինտեգրման մեթոդը: 1972-2007 թթ. ընթացքում Չինաստանում կրթահամակարգում ներգրավվածների և մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ-ի տվյալների համադրմամբ էմպիրիկ արդյունքներով բացահայտվեց, որ 1) Չինաստանում բարձագույն կրթահամակարգում ներգրավվածների և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ժամանակային շարքերի հաջորդականությունները գտնվում են առաջին կարգի ինտեգրման մեջ, 2) Չինաստանում գոյություն ունի երկարաժամկետ համաինտեգրման փոխառնչություն բարձագույն կրթության մեջ ներգրավվածների թվի և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջև և դրանց միջև երկարաժամկետ ազդեցությունը դրական է, 3) VECM վերլուծության միջոցով, երբ բարձագույն կրթության մեջ ընդգրկվածության տատանումը

շեղվում է երկարաժամկետ հավասարակշռությունից, համակարգն անհավասարակշիռ վիճակին ճշգրտման 7 %-անոց գործակցով, 4) հիմնվելով ազդակներին ի պատասխան ֆունկցիայի և անհամապատասխանության տարալուծման վրա, ապացուցվեց, որ բարձագույն կրթության սանդղակում մեկ միավոր դրական ազդեցությունը կարող է հանգեցնել դրա հետագա ընդլայնմանը. իրական ՀՆԱ-ի մեկ միավոր դրական ազդեցությունը նույնպես կարող է առաջմղիչ դեր ունենալ բարձագույն կրթության սանդղակի համար կարճաժամկետ հատվածում, բայց երկարաժամկետ հատվածում կունենա զսպող ազդեցություն: Նշված հեղինակները եզրակացնում և առաջարկում են. 1) Չինաստանում բարձագույն կրթության սանդղակի ընդլայնումը պետք է համահունչ լինի տնտեսական աճին, 2) բարձագույն կրթության մեջ ռեսուրսների գործնական կիրառելիության աստիճանը ոչ միայն պետք է չափերով ընդլայնվի, այլև պետք է ճշգրտումներ մտցնի բարձագույն կրթության կառուցվածքում:

Աֆսարը (2009) Թուրքիայի օրինակով բացահայտում է տնտեսական աճի և կրթության մեջ ներդրումների փոխկապվածությունը պարզ ցուցանիշով՝ Մարդկային կապիտալի առկայությամբ: Նրա ուսումնասիրության մեջ օգտագործված մեթոդն իրենից ներկայացնում է Գրանգերի պատճառականության թեստը: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Թուրքիայի տնտեսության մեջ տնտեսական աճի և կրթության համար կատարված ներդրումների կապի միջև գոյություն չունի երկկողմանի պատճառականություն: Միակողմանի պատճառական կապ արձանագրվել է միայն կրթական ներդրումներից դեպի տնտեսական աճ ուղղությամբ: Որևէ կապ չի նկատվել տնտեսական աճից դեպի կրթական ներդրումներ:

Գյումահ-Բրեմփոնգը (2010) կրթական ունակությունների երկու նոր ցուցանիշներից կազմել է պանելային տվյալներ՝ Աֆրիկայի երկրներում զարգացման մի շարք ձեռքբերումների հարցում կրթության ազդեցությունը հետազոտելու նպատակով: Նա գրել է, որ կրթությունն ունի դրական և կարևոր ազդեցություն այդ զարգացման ձեռքբերումների գործում և որ կրթության տարբեր մակարդակները տարբեր կերպ են ներգործում զարգացման արդյունքների վրա. զարգացման որոշ արդյունքների համար տարրական և միջնակարգ կրթությունն ավելի կարևոր է, քան հետագա կրթությունը, մինչդեռ որոշ արդյունքների համար, օրինակ՝ եկամտի աճի տեմպը, բարձրագույն կրթությունն ավելի կարևոր է: Նրա ուսումնասիրության արդյունքները պարունակում են կիրառական առաջարկություններ աֆրիկյան երկրների զարգացման քաղաքականության համար:

Աֆզալ էթ ալը (2010) հետազոտել է դպրոցական կրթության և տնտեսական աճի փոխառնչությունը Պակիստանում կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքներով օգտագործելով տարեկան ժամանակային շարքեր իրական ՀՆԱ-ի, իրական ֆիզիկական կապիտալի, ինֆլյացիայի և հանրակրթական դպրոցներում ընդգրկվածության տվյալների գծով՝ 1970-1971-ից մինչև 2008-2009 թթ.: Այս ուսումնասիրության մեջ բացահայտվել է համաինտեգրում՝ դպրոցական կրթության և տնտեսական աճի միջև: Ուսումնասիրության արդյունքները նույնպես հավաստում են, որ Պակիստանում թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ կտրվածքներով ուղղակի կապ գոյություն ունի դպրոցական կրթության և տնտեսական աճի միջև: Մակրոտնտեսական անկայունությունն ինֆլյացիայի ազդեցությամբ կասեցնում է տնտեսական աճը թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ առումով, մինչդեռ այն դպրոցական կրթության վրա զսպողական ազդեցություն է ունենում միայն երկարաժամկետ կտրվածքով: Դպրոցական կրթության և տնտեսական աճի միջև վիճակագրական կարևորության

փոխադարձաբար ներհյուսված առնչություն դիտարկվում է միայն կարճաժամկետ հատվածում: Այդ հետազոտության արդյունքները վկայում են, որ երբ իրական ՀՄԱ-ն և դպրոցներում ընդգրկվածության աստիճանը դիտարկվում են որպես կախյալ փոփոխականներ, ապա հաստատվում է համաինտեգրում իրական ՀՄԱ-ի, աղքատության, ինֆլյացիայի և դպրոցներում ընդգրկվածության ցուցանիշների միջև: Տնտեսական աճի վրա ֆիզիկական կապիտալի դրական և էական ազդեցությունը ապացուցվում է ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ դինամիկ մոդելների միջոցով: Ջուտ դպրոցներում ընդգրկվածության աստիճանի էական դրական ազդեցությունը տնտեսական աճի վրա բացահայտվեց թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ հատվածներում: Ինֆլյացիան՝ մակրոտնտեսական անկայունության դրսևորումներից մեկը, տնտեսական աճը կապում է թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ հատվածներում: Նրա բացասական և շոշափելի ազդեցությունը դպրոցական կրթության վրա տեղ է գտնում միայն երկարաժամկետ հատվածում: Խրոնիկական աղքատությունը, պարզվում է, էական ազդեցություն չունի տնտեսական աճի վրա թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ առումներով: Այս հետազոտության մեջ ստացվել է նաև մի շատ զարմանալի արդյունք աղքատության դպրոցական կրթության կապի վերաբերյալ: Դպրոցական կրթության վրա աղքատության երկարաժամկետ ազդեցությունը դրական և էական է, մինչդեռ կարճաժամկետ ազդեցությունը զգալիորեն բացասական է:

Կակար էթ ալը (2011) վերլուծել է Պակիստանում կրթական ծախսերի և տնտեսական աճի միջև կապը: 1980-2009 թթ. ժամանակահատվածի համար վերլուծվել են տվյալների ժամանակային շարքերը և կիրառվել համաինտեգրման և սխալների ճշգրտման մեթոդները՝ կրթության և տնտեսական աճի միջև կարճաժամկետ և երկարաժամկետ կապը որոշելու նպատակով: Այս հետազոտության մեջ փորձ է արվել վերլուծել և հստակեցնել կրթական քաղաքականությունը, կրթության միտումները և մարտահրավերները, ինչպես նաև դրանց դերը Պակիստանի տնտեսական զարգացման գործում: Ուսումնասիրությունը պարունակում է նաև կրթական հատվածի քաղաքականության լծակները՝ Պակիստանում մարդկային կապիտալի ձևավորման և տնտեսական աճի խթանման առնչությամբ: Հետազոտվել է կառավարության կրթական ծախսումների ազդեցությունը տնտեսական աճի վրա 1980-2009 թթ. ժամանակահատվածում՝ օգտագործելով համաինտեգրման և սխալների ճշգրտման վեկտորի վերլուծական մեթոդները: Ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս կապիտալի պաշարի և աշխատուժի՝ որպես սակավաթիվ առանցքային փոփոխականների մասնակցությունը երկրի տնտեսական աճի գործում, որոնք երկարաժամկետ հատվածում կրթության հետ մեկտեղ կարող են ազդել Պակիստանի տնտեսական զարգացման վրա: Հետազոտության արդյունքները փաստում են, որ կրթությունը տնտեսական աճի հետ երկարաժամկետ փոխազդեցության մեջ է: Կրթության ավելի բարձր չափորոշիչները բարելավում են աշխատուժի արդյունավետությունն ու արտադրողականությունը և երկարաժամկետ հատվածում նպաստում է տնտեսական աճին: Այնուամենայնիվ, կարճաժամկետ հատվածում կրթությունը տնտեսական աճի հետ որևէ էական կապ չունի: Հետևաբար, սա ցուցում է, որ կրթության որակը էական է երկրի տնտեսական աճի և մարդկային կապիտալի ունակությունների հզորացման համար: Կառավարությունն իր տեղական կառավարման բանիմաց վարչակազմով հանդերձ, պետք է ավելացնի կրթական հատվածի ծախսումները, որպեսզի խթանի հետազոտական և

զարգացման գործառույթները և բարելավի կրթության որակը, ինչը միտված է տնտեսական աճի կատարողականի բարելավմանը:



Գծապատկեր 1. ՀՆԱ-ում կրթության պետական ծախսերի տեսակարար կշիռը(%)[1]

Վերջին տարիների մակրոտնտեսական վերլուծությունները ցույց են տալիս, որ տարածաշրջանային երկրներից Իրանի Իսլամական Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունում համեմատաբար բարձր է ՀՆԱ-ում պետական ծախսերի տեսակարար կշռի հավելաճը (տես գծապատկեր 1): Սակայն, եթե ՀՀ-ում պետբյուջեից կրթության ֆինասավորման գերակշիռ մասը բաժին է ընկնում հանրակրթությանը, ապա Իրանի Իսլամական Հանրապետությունում պետական ֆինանսավորումը հավասարապես է բաշխվում ինչպես հանրակրթության, այնպես էլ մասնագիտական կրթական բնագավառներում: Ավելին, Իրանի Իսլամական հանրապետությունը ձգտում է ՀՆԱ-ում կրթության ծախսերի տեսակարար կշիռը մոտեցնել համաշխարհային միջին մակարդակին, այդ առումով առաջանցիկ դիրքեր գրավելով տարածաշրջանում (տես գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Տարածաշրջանային երկրների ՀՆԱ-ում կրթության ծախսերի տեսակարար կշռի համեմատումը (%)[2]

[1] UNESCO (2010) Reaching the Marginalized. Education for All Global Monitoring Report, for R&D: UNESCO Institute for Statistics database, February 2010, table 11, pp.41

[2] Nation Master.com, Education spending (% of GDP), pp. 91, available on 01.02,2013 **http://www.nationmaster.com/graph/edu_edu_spe-** education-spending-of-gdp

Կրթական ծառայությունների ոլորտը իր ուրույն տեղն ունի ազգային տնտեսության համակարգում, քանի որ այն ձևավորում է մարդկային կապիտալ և դրանով իսկ՝ վճռորոշ դեր կատարում սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման գործընթացում: Մարդկային կապիտալի առկայությունը սոսկ աշխատուժի ֆիզիկական վերարտադրության հետևանք չէ, այլ կրթության ճանապարհով հասարակության անդամներին մտավոր հնարավորությունների և աշխատանքային լրացուցիչ հմտությունների տրամադրման արդյունք է, որն էապես ազդում է ազգային եկամտի ձևավորման և բաշխման, տնտեսական աճի տեմպերի, հասարակական արտադրության և սպառման համամասնությունների վրա:

Մասնագիտական կրթության ծառայությունների ոլորտը ազգային տնտեսության ամբողջական օրգանիզմում առանձնանում է մի շարք առումներով: Նախ, ի տարբերություն արտադրական գործունեության արդյունքների (արտադրության միջոցներ, սպառման առարկաներ), բավականին բարդ է մարդկային կապիտալի տնտեսագիտական չափումն ու արժևորումը: Դրանով իսկ բարդանում է կրթական ծառայությունների մակրոտնտեսական արդյունավետության գնահատումը: Եվ վերջապես, մասնագիտական կրթություն ստացած անհատը երկակի ազդեցություն է գործում տնտեսական հարաբերությունների զարգացման վրա: Մի կողմից, նա հանդես է գալիս որպես հասարակական բարիքներ սպառող, մյուս կողմից, որոշիչ դեր կատարում այդ բարիքների արտադրության համար անհրաժեշտ կապիտալի ձևավորման գործընթացում (ֆիզիկական և մարդկային կապիտալ):

Ուստի, մակրոտնտեսական կարգավորման առումով, կարևորվում է մարդկային կապիտալի ազդեցության որոշումը ազգաբնակչության սպառողական վարքագծի, եկամուտների ձևավորման, նյութական բարիքների արտադրության և բաշխման, ծառայությունների ոլորտի զարգացման վրա: Այստեղից էլ կրթության մակրոտնտեսագիտության առջև դրվում են մի շարք խնդիրներ.

- կրթության ոլորտում տնտեսական արդյունավետության ինչպիսի՞ չափանիշներ պետք է օգտագործվեն,
- ինչպիսի՞ սկզբունքներով պետք է գնահատվի մասնագիտական կրթության ծառայությունների ոլորտում ռեսուրսների ներգրավման արդյունավետությունը,
- ինչպիսի՞ն պետք է լինի պետության և արտաբյուջետային ֆինանսավորման հարաբերակցությունը կրթության ոլորտում,
- ի՞նչն է նախընտրելի պետբյուջեից ֆինանսավորել. մասնագիտական կրթական ծառայություններ մատուցող հաստատություններին, թե այդ ծառայությունները սպառողներին:

Թվարկած խնդիրների լուծման ուղիները էապես փոխպայմանավորված են պետության կողմից վարվող հարկային, ֆինանսավարկային, ներդրումային, սոցիալական քաղաքականությամբ: Ընդ որում, այս ոլորտները միմյանց հակակշռելով, հավասարակշիռ վիճակ են ստեղծում կրթական շուկայում՝ ոլորտում ծախսված ռեսուրսները համապատասխանեցնելով ձևավորված մակրոտնտեսական իրավիճակի պահանջներին:

Այսպես, մասնագիտական կրթության ոլորտում կատարված ներդրումների արդյունավետությունը չպետք է գնահատել միայն կրթությանը առնչվող այնպիսի որակական ցուցանիշներով, ինչպիսիք են կրթական ծախսերի տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքում, գիտության և կրթության ծախսերի տեսակարար կշիռը պետբյուջեի ծախսային մասում, մասնագետ շրջանավարտին բաժին ընկնող

ուսումնական ծախսերի մեծությունը, աշխատունակ բնակչության կազմում բարձրագույն կրթությամբ մասնագետների տեսակարար կշիռը և այլն: Կարևոր է նաև գործազրկության մակարդակի և ազգաբնակչության կրթական ծառայությունների սպառման ծավալների կապի սերտության հստակ գնահատումը, հարկային խթանիչ քաղաքականության ազդեցության որոշումը ոչ միայն կրթական ծառայությունների առաջարկի, այլև պահանջարկի վրա:

Կրթական ոլորտում ներդրումները ձևավորելով մարդկային կապիտալ, գտնվում են երկարաժամկետ տնտեսական փոխհատուցման գործընթացում: Ուստի, մակրոտնտեսական հարթությունում գործող ներդրումային և ֆինանսավարկային լծակները ձգտում են ձևավորել մի այնպիսի հավասարակշիռ իրավիճակ, երբ երկարաժամկետ հատվածում մասնագետի պատրաստման ծախսերը արդարացվում են ոչ միայն անհատի, այլև հանրային արդյունավետության տեսանկյունից:

Մասնագիտական կրթության ֆինանսավորումը երեք ձևով է ընթանում: Առաջին դեպքում, կրթությունը ամբողջությամբ ֆինանսավորվում է պետբյուջեից և ուսանողը ընդհանրապես ազատվում է կրթավճարներից, ինչպես նաև կրթական ծառայություններին առնչվող ենթակառուցվածքային ծախսերից (հանրակացարանների, ինտերնետ սրահների, փորձարարական լաբորատորիաների վարձեր և այլն): Երկրորդ, երբ մատուցվող մասնագիտական կրթական ծառայությունների ծախսերի փոխհատուցման ամբողջ բեռը ընկնում է ուսանողի վրա: Երրորդ դեպքում, մասնագիտական կրթական ծառայությունների ֆինանսավորումը կատարվում է «խառը» ձևով՝ հանրային և մասնավոր միջոցներով, որն առավել տարածում ունի մասնագիտական կրթական պրակտիկայում:

Մակրոտնտեսագիտության տեսանկյունից խնդիր է դրվում բացահայտելու մասնագիտական կրթության պետական և մասնավոր ֆինանսավորման չափաբաժինների օպտիմալ հարաբերակցությունը: Պետական բյուջեի հաշվին կրթության ֆինանսավորման պարագայում ազգաբնակչությունը մի կողմից սպառման ծախսերում կրճատում է կրթավճարների չափը, սակայն մյուս կողմից, բախվում է հարկային բեռի ավելացման հիմնախնդրին, կապված աճող հանրային ծախսերի փոխհատուցումն ապահովող հարկային լրացուցիչ մուտքերի հետ:

Մյուս ծայրահեղ դեպքում, երբ մասնագիտական կրթությունը ամբողջովին ֆինանսավորվում է մասնավոր կրթավճարների հաշվին, ուսանողների շրջանում համալսարանական տարիներին և անգամ դրանից որոշ ժամանակ անց, ձևավորվում է լարված սոցիալ-տնտեսական իրավիճակ: Դրանով իսկ կրթական շուկայում նվազում է մասնագիտական ուսումնառության գրավչության աստիճանը և բուհական ծառայությունների պահանջարկը: Զուգահեռաբար բարձրանում է աշխատանքի շուկայում բարձրագույն կրթությամբ մասնագետների պահանջարկը, որոնց պատրաստման համար պետությունը լրացուցիչ միջոցներ է ծախսում և ի վերջո, հավասարակշռություն է սահմանվում մասնագետների առաջարկի ու պահանջարկի միջև:

Հետևաբար, մակրոտնտեսական միջավայրում կարևորվում է կրթության ֆինանսավորման դիտարկումը հարկային քաղաքականության տեսանկյունից, այնպես, որ մասնագիտական կրթության հանրային և մասնավոր ոլորտում ֆիսկալ գործիքներով ձևավորվի հարկային համաչափ բեռ: Հակառակ պարագայում, երբ մասնագիտական կրթությունը ամբողջովին ֆինանսավորվի մասնավոր հատվածի կողմից, ապա կրթական ծառայությունների մատուցման հսկայածավալ ռեսուրսներ չեն պահանջվի պետության կողմից, ուստի և այդ առումով կնվազի հարկային մուտքերի ավելացման

պահանջարկը: Մասնավոր հատվածում կրթական ծախսերի կրճատման պարագայում մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման բեռը ընկնում է պետության վրա, և դրանով իսկ, ավելանում է հարկային մուտքերի պահանջարկը:

Ուստի համակցված սկզբունքով, այսինքն պետական և մասնավոր միջոցներով մասնագիտական կրթության ֆինանսավորման համար հասարակությունում ձևավորվում է օպտիմալ մակարդակի հարկային բեռ: Դրանով, հնարավորություն է ստեղծվում պետական միջոցների հաշվին փոխհատուցելու կրթական ծախսերի մի մասը, իսկ մյուս մասը ֆինանսավորելու մասնավոր հատվածի հաշվին՝ այդ շրջանակում չնվազեցնելով մասնագիտական կրթության գրավչությունը:

Ատենախոսության երրորդ՝ ***«Կրթության ընդլայնման և տնտեսական աճի փոխկապակցության բացահայտման հետազոտությունը»*** գլխում մեկնաբանվել է տնտեսական ծրագրերի բարելավման գործում կրթության դերի կարևորումը: Մասնավորապես՝ պատշաճ և պահանջվող մարդկային ռեսուրսների առաջարկի պլանավորումը, այն գլխավոր պատճառներից է, որ շատ երկրներում դրդում է փոփոխություններ կատարել կրթահամակարգի կառուցվածքում: Թռուցիկ հայացք նետելով շատ երկրներում կատարված կրթական բարեփոխումներին, պարզ է դառնում, որ կրթության և տնտեսական համակարգի միջև ճեղքվածքի կրճատումը այդպիսի բարեփոխումների կարևոր նպատակն է, ինչպես նաև՝ պատճառը: Այսպիսով, կրթության և գործարար աշխարհի միջև կապի հաստատումը, թե՛ դպրոցում և թե՛ դպրոցից դուրս, այն կարևոր հիմնախնդիրն է, որը պետք է ուշադրության արժանանա պլանավորողների և քաղաքականություն մշակողների կողմից: Կրթության մեջ կատարվող ներդրումների գումարը և կրթական բարեփոխումներով զբաղվող մասնագետների բազմազանությունը վկայում է այն մասին, որ կրթությունն էական դեր ունի հասարակության զարգացումն իր նպատակների իրականացմանն ուղղորդելու գործում (Ազիզի, 1998):

Մարդկային ռեսուրսների որակական բարելավումը արտադրողականության և տնտեսական աճի խթանման որոշակիացման գլխավոր մեթոդներից մեկն է: Սա կարող է տեղի ունենալ մարդկային ռեսուրսներում ներդրումներ կատարելու միջոցով, մասնավորապես՝ բարելավելով կրթահամակարգը: Ներկայումս ընտանիքները և հասարակությունը աճող չափերով ներդրումներ են կատարում կրթության մեջ, որովհետև նրանք հավատացած են, որ մի կողմից՝ կրթությունը հանդես է գալիս որպես հաճելի և օգտակար ծառայություն և, մյուս կողմից՝ բարձրագույն կրթություն ունեցողներն անտարակույս կարող են ավելի շատ վաստակել:

Հետազոտությունում առաջ են քաշվել հետևյալ վարկածները:

1. Արդյո՞ք կա էական կապ Իրանի համախառն ներքին արտադրության և կրթության համաթվի միջև 1991-2007 թթ. ժամանակահատվածում:
2. Արդյո՞ք կա էական կապ Իրանի համախառն ներքին արտադրության և կյանքի սպասվելիք տևողության միջև 1979-2007 թթ. ժամանակահատվածում:
3. Արդյո՞ք կա էական կապ Իրանի համախառն ներքին արտադրության և կառավարության սպառողական բնույթի ծախսումների միջև 1979-2007 թթ. ժամանակահատվածում:
4. Արդյո՞ք կա էական կապ Իրանի համախառն ներքին արտադրության և կրթության ավելացրած արժեքի միջև 1979-2007 թթ. ժամանակահատվածում:
5. Արդյո՞ք կա էական կապ Իրանի կառավարության սպառողական բնույթի ծախսումների և նրա՝ կրթության ոլորտում կատարած սպառողական բնույթի ծախսումների միջև 1979-2007 թթ. ժամանակահատվածում:

6. Արդյո՞ք կա էական կապ կառավարության կրթական ծախսումների և կրթության ավելացրած արժեքի միջև 1979-2007 թթ. ժամանակահատվածում:
7. Արդյո՞ք կա էական կապ Իրանի ՀՆԱ-ի և մասնավոր դպրոցների թվի միջև 1991-2007 թթ. ժամանակահատվածում:
8. Արդյո՞ք կա էական կապ Իրանի ՀՆԱ-ի և պրոֆեսիոնալ-տեխնիկական դպրոցների թվի միջև 1979-2007 թթ. ժամանակահատվածում:
9. Արդյո՞ք կա էական կապ Իրանի ՀՆԱ-ի և դպրոցներում ընդհանուր ընդգրկվածության նկատմամբ աղջիկների ընդգրկվածության մասնաբաժնի միջև 1979-2007 թթ. ժամանակահատվածում:
10. Արդյո՞ք կա էական կապ Իրանի ՀՆԱ-ի և բակալավրից բարձր կրթությամբ անձնակազմի՝ համեմատաբար ցածր աստիճանով անձնակազմի թվի նկատմամբ աճի ցուցանիշի միջև 1979-2007 թթ. ժամանակահատվածում:
11. Արդյո՞ք կա էական կապ Իրանում կյանքի սպասվելիք տևողության և կրթության համաթվի միջև 1991-2007 թթ. ժամանակահատվածում:
12. Արդյո՞ք կա էական կապ Իրանի մարդկային զարգացման համաթվի և կրթության մեջ ավելացված արժեքի միջև 1991-2007 թթ. ժամանակահատվածում:
13. Արդյո՞ք կա էական կապ Իրանի ՀՆԱ-ի և կրթահամակարգում հետբուհական կրթությամբ վկայագիր ունեցող անձնակազմի թվի միջև 1991-2007 թթ. ժամանակահատվածում:
14. Արդյո՞ք կա էական կապ Իրանի ՀՆԱ-ի և մարդկային զարգացման համաթվի միջև 1991-2007 թթ. ժամանակահատվածում:

Տնտեսական աճի չափումը քանակական գործընթաց է և դրա արդյունքները տեսանելի են կարճաժամկետ հատվածում, մինչդեռ զարգացման հետևանքներն իրենց դրսևորում են երկարաժամկետ հատվածում: Հասարակության մեջ առաջընթաց փոփոխությունները տնտեսական աճն ու զարգացումը ուսումնասիրելու համար տնտեսագետներն օգտագործում են տարբեր ցուցանիշներ, ինչպես նաև վերլուծում են տարբեր տնտեսական քաղաքականություններ և տարբեր մշակույթների սոցիալական ասպեկտներ: Այդպիսի ցուցանիշներից է մարդկային զարգացման համաթիվը, որը 1990-ին առաջարկվեց տնտեսագիտության մեջ Նոբելյան մրցանակի դափնեկիր Ամարթիա Սենի և հանրահայտ պակիստանցի տնտեսագետ Մահբուբեյ Ալ-Հակի կողմից՝ Յելի համալսարանի և Լոնդոնի տնտեսագիտության դպրոցի պրոֆեսոր Գուստավ Ռանիսի հետ համատեղ: Նույն տարում այն ընդունվեց ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից և կիրառվեց 1991 թ-ից: ՄԶՀ-ը մի համեմատական աղյուսակ է, որում տարբեր երկրները դասակարգվում են հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ մեկ շնչին ընկնող իրական եկամուտը, կրթությունը, հիգենիան, սնունդը և կյանքի սպասվելիք տևողությունը (ծննդյան պահից): Այստեղ ՀՆԱ-ի ցուցանիշն օգտագործվում է երկրի տնտեսական վիճակը և ներուժը ներկայացնելու համար, իսկ այդ ցուցանիշի բարելավումը դիտարկվում է որպես անհրաժեշտ պայման երկրի առաջընթացի համար:

Տնտեսական զարգացման բնութագրման համար ՀՆԱ-ի օգտագործումն առաջացնում է մի շարք հիմնախնդիրներ, ուստի համընդունելի է դարձել այն մոտեցումը, որ տնտեսական զարգացումը ներառում է թ՛ ՀՆԱ-ի աճը, թե՛ մարդկային կարողությունների բարելավումը: Հետևաբար, մի շարք այլ ցուցանիշներ են օգտագործվում, ինչպիսիք են՝ կյանքի սպասվելիք տևողությունը և կրթության համաթիվը. վերջինս բնութագրում է կրթական առաջընթացը և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի շրջանակներում տա-

ռեկան կտրվածքով ներկայացվում է ՄԱԿ-ի կողմից՝ հաշվարկման հիմք ընդունելով գրագիտության մակարդակի համաթիվը. կրթական ծախսերի մասնաբաժինը և համացանցի կիրառման աստիճանը (ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի 2007 թ. զեկույցը):

Սույն հետազոտության մեջ օգտագործվում են նաև չափման մի շարք այլ ցուցանիշներ՝ 83 համաթվեր, որոնք ներառված են Համաշխարհային բանկի մեթոդներում (KAM)՝ գիտելիքահենք տնտեսության չափումների համար, այդ թվում՝ գրագիտության մակարդակը և դպրոցներում աղջիկների ներգրավվածության աստիճանը: Գլխավոր բնութագրերից մեկը տեսական կրթության համեմատությամբ տեխնիկական-մասնագիտական կրթության զարգացման միտումն է, որի խնդիրն է՝ կրթական ծրագրերը համապատասխանեցնել աշխատատեղերի պահանջներին: Այս խնդիրը միջնակարգ կրթության ոլորտում պահանջում է շոշափելի տաղաշարժեր՝ տեխնիկական և մասնագիտական կրթության առաջընթացի և զարգացման համար: Այս մեթոդի նշանակալի դրույթներից մեկն այն է, որ կրթության խթանման ճանապարհով կարելի է ապահովել ավելի շատ ուսանողներ, ներառյալ մտավոր թերություններով սովորողներին, ովքեր դժվարանում են հասկանալ աբստրակտ և վերլուծական հայեցակարգերը, նրանց համար ապահովելով հավասար կրթական հնարավորություններ: Ուստի, սույն աշխատանքում որպես ցուցանիշ ընդունվում է տեխնիկական-մասնագիտական դպրոցների թիվը: Մասնավոր դպրոցների թիվը նույնպես համարվում է ցուցանիշ, որը բնութագրում է հանրային մասնակցությունը կրթության ոլորտում:

Երբ հարկավոր է վերլուծել որևէ ինստիտուտի, ասենք կրթահամակարգի դերն ու արդյունքը, առաջին հերթին անհրաժեշտ է մշակել (որոշել) զարգացման տարբեր առումները, գնահատել համապատասխան ցուցանիշներ, որոնք քանակական տվյալներով կբնութագրեն իրավիճակը վերջին տարիներին: Այնուհետև, ինստիտուտը պետք է նույնականացվի ամբողջությամբ վերցրած. պետք է որոշվեն դրա զարգացման և կատարելագործման չափանիշները և, վերջապես, անհրաժեշտ է հավաստի աղբյուրներից ստանալ խնդրին առնչվող տվյալներ նախկինում եղած վիճակի վերաբերյալ: Վերը իրականացված ուսումնասիրության մեջ առաջ են քաշվել համաթվի երկու խումբ. ա) տնտեսական զարգացման համաթվեր և բ) համաթվեր, որոնք առնչվում են կրթությանը: Արժե նշել, որ զարգացման համաթվերը գիտելիքահենք տնտեսության մեջ ներհյուսված են կրթության հետ, նկատի ունենալով ՄԱԿ-ի մարդկային զարգացման համաթվերը և Համաշխարհային բանկի զարգացման համաթվերը, կրթության համաթվերից շատերը ներկայացվում են որպես հասարակական առաջընթացի գնահատման չափանիշներ:

Սույն հետազոտության մեջ ներկայացված ժամանակային շարքերի և փոփոխականների վերաբերյալ տեղեկատվությունը քաղվել է Իրանի Վիճակագրական Կենտրոնի և Կրթության նախարարության 1979-2007 թթ. տարեգրքերից, ինչպես նաև Գրագիտություն Ուսուցանման Կազմակերպության զեկույցներից: Ձեռք բերված տվյալների վերլուծության համար օգտագործվել են նկարագրական և դեդուկտիվ վիճակագրական մեթոդները: Այսպես, օգտագործվել են տոկոսային հաճախականության աղյուսակներ, տվյալների նկարագրության միջին և ստանդարտ շեղումն, ստացված տվյալների վերլուծության և դուրս բերման «t» թեստեր և փոփոխականների ժամանակային շարքերի առանցքային դետերմինանտներ:

Նմանապես կիրառվել է ռեգրեսիոն վերլուծություն, երբ կանխատեսվել է մեկ փոփոխական՝ օգտագործելով մեկ ուրիշը և օգտագործվել է Պիերսոնի համահարաբերակցության գործակիցը՝ փոփոխականների միջև կապը որոշելու համար:

- Արդյոք կա՞ էական կապ Իրանի 1991-2007 թթ. ՀՆԱ-ի և նույն տարիների համաթվի միջև:

Գոյություն ունի էական կապ Իրանի ՀՆԱ-ի և մարդկային զարգացման կրթական համաթվի միջև: Այդպես, կրթության և ՀՆԱ-ի կապի վերաբերյալ հետազոտության վարկածը հաստատվել է, մի արդյունք, որը համապատասխանում է նախորդ հետազոտողների, օրինակ Սաքսոնհաուզի, ստացած արդյունքի հետ: Կրթությունը հանգեցնում է ՀՆԱ-ի ավելացման, իսկ սա իր հերթին պայմանավորում է ավելի շատ ներդրումներ կրթության մեջ:

- Արդյոք կա՞ էական կապ Իրանի 1991-2007 թթ. ՀՆԱ-ի և նույն ժամանակաշրջանում կյանքի սպասվելիք տևողության միջև:

Գոյություն ունի էական կապ Իրանի ՀՆԱ-ի և մարդկային զարգացման կյանքի տևողության համաթվի միջև: Այսպես, հետազոտության վարկածը հաստատվել է: Ըստ նախկինում կատարված հետազոտությունների՝ այս պատկերը կանխատեսելի էր: Օրինակ, ԱՄՆ-ի կողմից վերջերս իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ Աֆղանստանում կանանց կյանքի սպասվելիք տևողությունը աշխարհում ամենացածրն է և սա կանխատեսելի է, ելնելով Աֆղանստանի ՀՆԱ-ից: Արտադրողական և տնտեսական ավելի մեծ կարողություններով երկիրը կրթության և առողջապահության վրա կարող է շատ ավելի ծախսել, և այս դրույթը համընկնում է Հարբիսոնի (1991) տեսակետի հետ:

- Արդյոք կա՞ էական կապ Իրանի 1979-2007 թթ. ՀՆԱ-ի և նույն ժամանակաշրջանում կառավարության ծախսումների միջև:

Գոյություն ունի էական կապ Իրանի ՀՆԱ-ի և կառավարության ծախսումների միջև և, այդպիսով, հետազոտության վարկածը հաստատվում է: Երկրում ավելի շատ արտադրությունը հանգեցնում է ավելի մեծ եկամտի երկրի համար: Հետևաբար, երկրում սպառողական ծախսումները որոշակիորեն կաճեն, ինչպես և կաճեն երկրի ծախսերը կրթության, առողջապահության և սոցիալական ապահովության նպատակներով: Այս դրույթը համահունչ է Պսախարոպոուլուսի (1972) հետազոտության արդյունքներին:

- Արդյոք կա՞ էական կապ Իրանի 1979-2007 թթ. ՀՆԱ-ի և նույն ժամանակաշրջանում կրթության ավելացրած արժեքի միջև:

Գոյություն ունի էական կապ Իրանի ՀՆԱ-ի և նույն տարիների համար կրթության ավելացրած արժեքի միջև, և այդպիսով, հետազոտության վարկածը հաստատվում է: Սա կանխատեսելի էր նախորդ հետազոտողների՝ Դենիսոնի, Շուլցի, Հարբերգերի և Սելովսկու ստացած արդյունքներից, որոնք վկայում են, որ կրթության ավելի բարձր որակը և ավելի մեծ քանակը դրականորեն են անդրադառնում արտադրության վրա:

- Արդյոք կա՞ էական կապ կառավարության 1979-2007 թթ. ծախսումների ՀՆԱ-ի և նույն ժամանակաշրջանում կառավարության կողմից կրթահամակարգում կատարված ծախսումների միջև:

Գոյություն ունի էական կապ կառավարության համախառն սպառողական բնույթի ծախսումների և նույն տարիներին կառավարության կողմից կրթության վրա կատարած ծախսումների միջև, և, այդպիսով հետազոտության վարկածը հաստատվում է: Այս արդյունքը համապատասխանում է նախկինում ստացված, օրինակ՝ Պսախարոպոուլուսի կողմից արդյունքներին: Հետևաբար, կրթության մեջ ավելի շատ ներդրումները կհանգեցնեն ավելի շատ եկամտի, իսկ ձեռք բերված եկամուտը

կներդրվի ժողովրդի բարեկեցության և ավելի շատ ծառայություններ մատուցելու նպատակներով:

- Արդյոք կա՞ էական կապ կառավարության 1979-2007 թթ. համախառն սպառողական բնույթի ծախսումների և նույն ժամանակաշրջանում կրթության ավելացրած արժեքի միջև:

Գոյություն ունի էական կապ կառավարության համախառն սպառողական բնույթի ծախսումների և նույն տարիներին կրթության ավելացրած արժեքի միջև, և, այդպիսով հետազոտության վարկածը հաստատվում է: Սա կանխատեսելի էր նախորդ հետազոտողների, օրինակ Մակ Մահոնի (1987) հետազոտության արդյունքներից: Կրթությունը պայմանավորում է ազգային եկամտի աճ, իսկ ավելի մեծ ազգային եկամուտ ձեռք բերելու պարագայում, եկամուտները կծախսվեն հասարակության պահանջմունքների բավարարման նպատակով:

- Արդյոք կա՞ էական կապ Իրանի 1991-2007 թթ. ՀՆԱ-ի և նույն ժամանակաշրջանում մասնավոր դպրոցների թվի միջև:

Սա կանխատեսելի էր ըստ մի շարք գիտնականների՝ Չուբի, Մոեի, Մաղիսոնի և Շնեյդերի հետազոտությունների, որոնցում ուշադրություն է դարձվում կրթական կենտրոնների մասնավոր վերահսկողության հարցին: Մասնավոր դպրոցները կարող են նվազեցնել կրթության հարցում հանրային սպասումները կառավարության նկատմամբ, ուստի կառավարությունը կարող է սեռեռել համեմատաբար հետամնաց տարածաշրջանների վրա՝ ավելի արդարացի բաշխելով առկա միջոցները, քանի որ չի միջամտի մասնավոր դպրոցների գործերին: Միջոցների արդար բաշխումը մակրոմակարդակում կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը, իսկ կառավարությունն ավելի մեծ ուշադրություն կդարձնիպետական և մասնավոր կրթական կենտրոնների միջև մրցակցության ծավալմանը (Նաֆիսի, 1994): Ի պատասխան՝ կրթության ավելի բարձր որակը կարող է դառնալ երկրի տնտեսական աճի ու զարգացման գործոն:

- Արդյոք կա՞ էական կապ Իրանի 1979-2007 թթ. ՀՆԱ-ի և նույն ժամանակաշրջանում տեխնիկական-մասնագիտական դպրոցների թվի միջև:

Գոյություն ունի էական կապ Իրանի 1979-2007 թթ. ՀՆԱ-ի և նույն ժամանակաշրջանում տեխնիկական-մասնագիտական դպրոցների թվի միջև, և, այդպիսով հետազոտության վարկածը հաստատվում է: Սա համընկնում է նախորդ հետազոտողների՝ Մոհսենփուրի (1998), Կարդանի (2003) և Աբդուլհանիզադեի (1995) ստացած արդյունքների հետ, ովքեր ցույց տվեցին, որ տեխնիկական դպրոցների անտեսումը հանգեցնում է գործազրկության և թերզբաղվածության:

- Արդյոք կա՞ էական կապ Իրանի 1979-2007 թթ. ՀՆԱ-ի և նույն ժամանակաշրջանում դպրոցներում աղջիկների ներգրավվածության ցուցանիշի միջև:

Գոյություն ունի էական կապ Իրանի 1979-2007 թթ. ՀՆԱ-ի և նույն ժամանակաշրջանում պրոցներում աղջիկների ներգրավվածության ցուցանիշի միջ: Սա համահունչ է այնպիսի հետազոտողների արդյունքներին, ինչպիսիք են՝ Էլիզաբեթը, Քինգը, Սահամը և Ալդեմը (1988), ովքեր ընդգծում էին կանանց կրթվածության կարևորությունը և դրանց ազդեցությունը կրթական համաթվերի վրա: Սույն հետազոտությունը նաև ցուցում է կորելյացիայի առկայությունը ՀՆԱ-ի և դպրոցներում աղջիկների ներգրավվածության ցուցանիշի միջև, և այս դրույթը համապատասխանում է Բարեվգի (1990) ինչպես նաև Լուաթի և Դամիսնի (1991) ստացած արդյունքներին: Նրանք նաև ընդգծում էին կանանց կրթության կարևորությունը երկրի տնտեսական զարգացման հարցում: Իրանում բարձրագույն կրթության մակարդակում կանանց

դերակատարության աճին զուգընթաց կրթության և տնտեսության ոլորտներում Իրանի կատարողականը դրական է գնահատվում:

- Արդյոք կա՞ էական կապ Իրանի 1979-2007 թթ. ՀՆԱ-ի և կրթահամակարգում բակալավրից բարձր աստիճանով աշխատողների մասնաբաժնի միջև:

Գոյություն ունի էական կապ Իրանի 1979-2007 թթ. ՀՆԱ-ի և կրթահամակարգում բակալավրից բարձր աստիճանով աշխատողների մասնաբաժնի միջև, և, այդպիսով հետազոտության վարկածը հաստատվում է: Սա համահունչ է Կիմի (2002), Ամարզադեհի (1994) և Թավասոլի (1992) հետազոտությունների արդյունքներին, ովքեր ապացուցել են, որ կրթված անհատներն ունեն ավելի մեծ մասնագիտական կարողություններ: Հետևաբար, այս կերպ նրանք բարձրացնում են իրենց արտադրողականությունը, և ի պատասխան՝ աճող արտադրողականության պայմաններում կրթահամակարգը ավելի է նպաստում ՀՆԱ-ի աճի և տնտեսական զարգացմանը:

- Արդյոք կա՞ էական կապ 1991-2007 թթ. կյանքի սպասվելիք տևողության և նույն տարիների կրթական համաթվի միջև:

Գոյություն ունի էական կապ 1991-2007 թթ. կյանքի սպասվելիք տևողության և նույն տարիների կրթական համաթվի միջև, և, այդպիսով հետազոտության վարկածը հաստատվում է: Սա համապատասխանում է նախկինում կատարված հետազոտության արդյունքների, որի հեղինակները՝ Դամիսնը և Լոհաթը (1991) ցույց են տվել, որ կրթությունն ազդում է կյանքի տևողության վրա: Կրթված վարդիկ ավելի ուշադիր են իրենց սեփական և ուրիշների առողջության նկատմամբ և իրենց առողջությունն ավելի լավ կարող են պաշտպանել: Արժե նշել, որ այս երկու համաթվերը, ՄԱԿ-ի մարդկային զարգացման գլխավոր համաթվերի հետ մեկտեղ, օգտագործվել են որպես տոկոսային մասնաբաժիններ:

- Արդյոք կա՞ էական կապ Իրանի 1991-2007 թթ. մարդկային զարգացման համաթվի և նույն ժամանակաշրջանում կրթության ավելացրած արժեքի միջև:

Գոյություն ունի էական կապ Իրանի 1991-2007 թթ. մարդկային զարգացման համաթվի և նույն ժամանակաշրջանում կրթության ավելացրած արժեքի միջ: Ըստ նախորդ հետազոտողների՝ Ռաբինսոնի և Վալտերսի (1983), Գրիլիչիզի (1964) և Ուելչի (1970) սա կանխատեսելի էր, այսինքն՝ կրթության արդյունավետության աճը կամ ԳՆԱ-ի մեջ կրթության ավելացրած արժեքի մեծացումը, կհանգեցնի մարդկային զարգացման ավելի մեծ համաթվի:

- Արդյոք կա՞ էական կապ Իրանի 1991-2007 թթ. ՀՆԱ-ի և նույն ժամանակաշրջանում Գրագիտության Ուսուցանման Կազմակերպությունում հետբուհական կրթության դիպլոմով աշխատողների թվի միջև:

Գոյություն ունի էական կապ Իրանի 1991-2007 թթ. ՀՆԱ-ի և նույն ժամանակաշրջանում Գրագիտության Ուսուցանման Կազմակերպությունում հետբուհական կրթության դիպլոմով աշխատողների թվի միջև, և, այդպիսով հետազոտության վարկածը հաստատվում է: Սա կանխատեսելի էր ըստ նախորդ հետազոտողների՝ Ջիրվանտի (1987) և Նասիրազադեի (1990): Ավելորդ չէ նշել, որ սույն հետազոտության մեջ գրագիտության ուսուցանման աստիճանի փոխարեն օգտագործվել է ուսուցիչների աստիճանի փոփոխականը: Չնայած պաշտոնական և ոչ պաշտոնական վիճակագրությունը ցույց է տալիս, որ Իրանում գրագիտության մակարդակն աճում էբայց քանի որ գոյություն չունեն հավաստի տարեկան տվյալներ այս փոփոխականի վերաբերյալ, ուստի այստեղ օգտագործվել է աշխատողների աստիճանի փոփոխականը: Անհրաժեշտ է նշել, որ նկատի առնելով զարգացման նպատակով գրագիտու-

թյան ուսուցանման կարևորությունը, Իրանի վիճակն այս կապակցությամբ տանելի-ընդունելի է:

- Արդյոք կա՞ էական կապ Իրանի 1991-2007 թթ. ՀՆԱ-ի և նույն ժամանակաշրջանում մարդկային զարգացման միջև:

Գոյություն ունի էական կապ Իրանի 1991-2007 թթ. ՀՆԱ-ի և նույն ժամանակաշրջանում մարդկային զարգացման միջև: Նախորդ հետազոտողների՝ Ռոբինսոնի և Վալտերսի (1983) տեսակետի համաձայն սա կանխատեսելի էր, քանի որ ավելի մեծ ՀՆԱ-ն կտանի դեպի մարդկային զարգացման ավելի բարձր համաթվեր, ինչպիսիք են՝ կյանքի սպասվելիք տևողությունը և կրթական համաթիվը:

Եզրակացություններ բաժնում ամփոփվել են կրթության և տնտեսական աճի փոխազդեցության ուսումնասիրության արդյունքները Իրանի Իսլամական Հանրապետությունում:

1. Կրթական ծրագրերում ներդրումներն երաշխավորում են շոշափելի հատույց ոչ միայն անհատների՝ այլև՝ հասարակության համար: Այդ պատճառով կրթության նկատմամբ պահանջարկը շարունակաբար աճում է: Ավելին, կառավարությունները ավելի շատ ռեսուրսներ են հատկացնում կրթությանը՝ նպատակ ունենալով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը և արագացնել ազգային արտադրության աճը: Քանի որ անհատական ունակությունների սերմանումը հանգեցնում է արտադրական կարողությունների և ժողովրդի վաստակելու ունակության բարելավմանը, ներկայումս համընդունելի է դարձել, որ բնակչության մեծ մասին կրթական ծառայությունների մատուցումը հանգեցնում է ժողովրդի մեջ եկամտի ավելի հաշվեկշռված բաշխմանը: Եթե կրթությունը սերմանի հմտություններ, ապա աշխատանքի արտադրողական ուժը կմեծանա: Ավելի մեծ կարողությունը տանում է դեպի ապրանքների ու ծառայությունների ավելի շատ արտադրությունը և խթանում տնտեսական աճը: Քանի որ կրթությունն ձևավորում է նոր կարողություններ և փորձառություն, երիտասարդներն ավելի լավ կնախապատրաստվեն աշխատաշուկային և, այլ հավասար պայմաններում, ավելի շատ կրթություն ստացած անհատներն աշխատաշուկայում կգնահատվեն ավելի բարձր վարկանիշով:
2. Սոցիալական և տնտեսական հիմնահարցերի լուծման գործում ժողովրդի ավելի լայն մասնակցությունը ժողովրդավարության նախապայմանն է: Կրթության անուղղակի էֆեկտներից մեկը սոցիալական գործունեության մեջ երիտասարդության ավելի լայն մասնակցությունն է: Ժամանակակից աշխարհում, երբ նորարարությունները կարևոր դերակատարում ունեն կայուն տնտեսական աճի գործում, ցանկացած երկրի հաջողությունը կախված է ժամանակակից տեխնոլոգիաներում և գործընթացներում արտոնագրած ձեռքբերումներից: Հասարակությունը որքան ավելի շատ բաղկացած լինի կրթված և մեծ փորձառությամբ անհատներից, այնքան ավելի հավանական է տեխնոլոգիաների բարեփոխումը, հայտնագործությունների և նորարարությունների իրականացումը: Մյուս կողմից, տնտեսական աճն ու զարգացումը հանգեցնում են ընտանիքների և կառավարության կողմից ֆինանսական աջակցության ընդլայնմանը: Այս հիմնախնդրի շուրջ կատարված բոլոր հետազոտությունները պարզորոշում են, որ փոխադարձ կապ գոյություն ունի կրթության և զարգացման միջև:
3. Կրթության վերաբերյալ հետազոտություններ պետք է իրականացվեն միկրոտնտեսական քաղաքականության և կառավարության քաղաքականության առում-

ներով: Կարևորվում են կրթահամակարգի ֆինանսական ռեսուրսների ապահովման տարբեր մեթոդների շուրջ ուսումնասիրությունները: Ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ Իրանի Իսլամական Հանրապետությունում առաջնահերթություն է համարվում տեխնիկական և մասնագիտական կրթության առաջանցիկությունը, գրագիտության ուսուցման ծրագրերի շարունակականությունը և ոչ պետական դպրոցներ հիմնելու հարցում խրախուսող միջոցների կիարռումը: Արդիական է համարվում նաև կրթության տնտեսագիտական հիմնախնդիրների բացահայտումը քաղաքականություն մշակողների համար:

4. Ելնելով մակրոտնտեսական հավասարակշռության տեսանկյունից կարևորելով կրթության ֆինանսավորումը, առաջարկվել է մասնագիտական կրթության հանրային և մասնավոր ոլորտում ֆիսկալ գործիքներով ձևավորվել հարկային համաչափ բեռ: Երբ մասնագիտական կրթությունը ամբողջովին ֆինանսավորվի մասնավոր հատվածի կողմից, ապա կրթական ծառայությունների մատուցման հսկայածավալ ռեսուրսներ չեն պահանջվի պետության կողմից, ուստի և այդ առումով կնվազի հարկային մուտքերի ավելացման պահանջարկը: Սակայն մյուս կողմից, մասնավոր հատվածում կրթական ծախսերի ավելացման պարագայում ազգաբնակչությունը կրթավճաների պատճառով կրճատում է սոցիալական ծառայությունների այլ վճարներ, այդ բեռը թողնելով պետության վրա, և դրանով իսկ, ավելանալով հարկային մուտքերի պահանջարկը: Ուստի, համակցված սկզբունքով, այսինքն պետական և մասնավոր միջոցներով մասնագիտական կրթության ֆինանսավորման համար հասարակությունում ձևավորվում է օպտիմալ մակարդակի հարկային բեռ: Դրանով, հնարավորություն է ստեղծվում պետական միջոցների հաշվին փոխհատուցելու կրթական ծախսերի մի մասը, իսկ մյուս մասը ֆինանսավորելու մասնավոր հատվածի հաշվին՝ այդ շրջանակում չնվազեցնելով մասնագիտական կրթության գրավչությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Սադեհ Մեյմանդի Մ.Ռ. Մարզպանյան Հ.Ա., Մկրտչյան Հ.Վ., Indexes Of Correlation Between Education And Economic Development (A Case Study Of Iran), Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, N 7, 2011, էջ 16-26:
2. Սադեհ Մեյմանդի Մ.Ռ., Մարզպանյան Հ.Ա., Literacy education and economic development (conceptual approach), Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, N 3, 2012, էջ 8-17:
3. Mohammad Reza Sadeh Meymandi, Education and Economic Growth: Iran-Armenia Comparative Interpretation, Agrrarian News, 2, 2013, pp: 21-25.
4. Mohammad Reza Sadeh Meymandi, Human Capital Assesment under Bologna Process, Բոլոնիայի գործընթացը և կրթական բարեփոխումները զարգացող տնտեսություն ունեցող երկրներում / Ավ.Մկրտչյանի անվ. տնտեսաիրավագիտական համալսարան, Երևան, 2013, էջ 142-147:

МУХАМАД РЕЗА САДЕ МЕЙМАНДИ

ВЗАИМОСВЯЗЬ ОБРАЗОВАНИЯ И ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ В ИРАНЕ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01 “Общая экономика”.

Защита диссертации состоится 30-го мая 2014 г. в 15^{00} часов на заседании специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в ЕГУ по адресу: г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Экономическое развитие базируется в основном на росте ВВП, что обеспечивается эффективным использованием ресурсов хозяйственной деятельности и одновременно повышением степени потребностей товорно-материальных ценностей и предлагаемых услуг сервиса. Государства стремятся к выявлению путей эффективной инвестиции в процесс развития человеческих ресурсов, тем самим оцененивая взаимосвязь расходов на образование и экономического роста на ближайшую перспективу. С этой точки зрения становится актуальным оценка ввзаимосвязи образования и экономического развития в Исламской Республике Иран, поскольку исходя из четвертого плана програмного развития экономики страны, уже в 2025 году Иран должен представиться как развитая страна со своими передовыми экономическими, научными, технологическими позициями в регионе, с одновременным укреплением принципов исламского мировозрения и расширения широких кругов международных отношений. Всему этому можно достичь ориентировываясь на наукоемкие и образовательные пути развития в нынешнем веке.

Во многих странах мира, особенно в развивающихся обоснованное бюджетирование расходов на образование становится крайне необходимым. Инвестирование в образовательные услуги становится актуальным, поскольку оно обеспечивает дальнейшее стабильное развитие экономики, улучшает стандарты качества жизнедеятельности населения и социального страхования. Особенно ярко это стало выражаться в 20-ом веке, после Второй мировой войны, когда среди приоритетов развития предлагаемых услуг населению образование заняло ведущие позиции.

Вместе с тем, быстрый рост расходов на образование в разных уровнях привело к необходимости реальной оценки возмещения стоимости подобных услуг и тем самым потребовала от стран применение научных подходов к измерению эффективности израсходования ресурсов в образовательном процессе. С развитием среднего и профессионального образования большее внимание уделяется начальному и всеобщему образованию, что по рекомендациям международных организаций должно быть обязательным и бесплатным для населения, исходя из защиты прав человека. Однако, государства, обеспечивая доступ населения ко всеобщему образованию,

стремятся к улучшению рынка услуг профессионального образования, что и происходит в Иране, где роль образования оценивается в процессе развития экономики.

Научная новизна исследования состоит в оценке специфических взаимосвязей уровня образования и экономического роста в Исламской Республике Иран. В частности:

- на основе сравнительного анализа образования в Исламской Республике Иран и Республике Армения была обоснована эффективность смешанного финансирования в развивающихся странах, с гармонизацией государственных и частных ресурсов и созданием эффективных рычагов экономического роста посредством образования,
- на основе анализа структурных изменений предлагаемых образовательных услуг и тенденций экономического роста, предложены приоритетные направления образования в Иране, давая предпочтение распространению грамотности и среднего образования среди населения,
- на основе количественной оценки индекса человеческого развития обоснованы пути улучшения позиции страны в международной шкале рейтинга, акцентируясь на развитие наукоемкой экономики, с повышением образовательного ценза населения, обходя нефтяные факторы,
- с помощью регрессионного анализа была оценена степень тесноты взаимосвязей коэффициентов корреляции между экономическим ростом и ряд показателей образования населения, обосновывая тесную взаимосвязь между степенью общего образования и развития экономики Ирана.

Исходя из результатов исследования, можно констатировать, что привлечение ресурсов в процесс образования как на микро- так и на макроэкономическом уровне приводит к улучшению социальных и профессиональных возможностей индивидуумов, тем самым поддерживая экономический рост и доходы в Иране.

MOHAMMAD REZA SADEH MEYMANDI

THE RELATIONSHIP BETWEEN EDUCATION AND ECONOMIC DEVELOPMENT IN IRAN

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the PhD in Economics in the Field of 08 .00.01 "General Economics".

The Defense of the dissertation will be take place on May 30, 2014, at 15:00, at the Meeting of Specialized Council 015 of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Adress: 52 Abovyan Str., Yerevan, 0009, Armenia.

SUMMARY

Economic growth is a process the main basis of which is the growth of GDP. The growth planning is done with the aim to equip with facilities and natural resources to produce more required commodities and services. The government should find a serious solution for the human resources in education and the costs related to that under the title of investment and should consider this in the economic development plans and the prospective plan as an important section. This point should be considered that based on the basics of the fourth development plan and Islamic Republic Prospective in the horizon of 2025 Iran will be a developed country with the first economic, scientific and technological position in the region, with Islamic identity, inspiring in the Islamic world and through fruitful and effective interaction in international relationships. This can only be achieved through planning in education based on knowledge- orientation in the present age.

In many countries worldwide, especially in developing ones, education budget is of high importance. Investing in education is essential, since it provides for the growth and the development of a constant economy, the improvement of the standards of living and welfare of the society, as well as equal opportunities of engagement and the distribution of social justice. Since such service had extraordinary privileges of which the society had been aware, the demand for education increased in the twentieth century especially after the Second World War. Because of such an increasing demand along with a quick growth in educational costs in various levels, it is necessary that all countries make appropriate decisions and plan precise programs for the output production of such precious service. All countries must also try extensively to exploit their resources to achieve this goal through scientific and reasonable methods. In order to materialize the primary education, and in some countries the secondary education, for all people, the parent education is considered as a part of human rights; therefore, international organizations recommend all developing countries that primary education be compulsory and free. Having a high school diploma is a necessary condition to enter the work market in many developing countries. Having recognized the importance of literacy and education, many countries in the world have focused on free education and educational services in primary and secondary levels. According to Iran's constitution, education is free, so a proper education budget can lead to the growth and development of the country in different aspects. Obviously, developed countries' budgets demonstrate that economic growth and the increase in the gross domestic and national

production have led to the development of education and research budgets in these countries. Accordingly, this research seeks to show the importance of investment in education and the role of education in the economic development of the Islamic Republic of Iran.

The scientific novelty of the study is the determining specificity Education and Economic Growth Interdependence in Islamic Republic of Iran. Particularly:

- in framework of comparative analyzing Islamic Republic of Iran and Armenian Republic, is confirmed efficiency of education "mix" financing approach, with harmonization of using governmental and privet resources in developing countries and making additional providers for economy growth through education,
- starting point of analyzing interdependence between structural changing in educational providing and economy growth, is determined priorities of education enlargement considered to economy development, such as giving precondition to literacy and advance education extension in Iran,
- throughout quantity human development index structural assessments, is verified of enrichment country placement in the world ranking not all trough economic, particularly oil factors, but mainly with using knowledge based economy and Iranian population educational qualification development,
- as a result of regression analyzing is calculated correlation aggregate ratios of intercommunication closeness between economy development and some of indicators of education, for giving endorsement of higher interdependence for Iranian economy growth and schooling.

According to obtaining resurch results, this fact is confirmed that allocation of more resources, in both micro and macro levels, to education leads to development of individual and social capabilities, as well as more income and economic growth in Iran.